

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ", Ի

ՆԱՄԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ԲՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐ Ե ՈՒՂՂԵԼ ԱՍ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լուսարի

ԳԱՀԻՐԷ

Նամակատուի Թիւ 117

DIRECTION DU JOURNAL

NOR-OR

CAIRE, B. P. N° 117

Ձեռագրներն ևս չեն դարձուիր:

Արտոգրութիւն Վ. ՄԻՒՆԻՅԵ:

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԲՆԹԵՐՅԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱՐՔԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

ՂՐԵ. ՈՂՁ

Գանիթի համար Տարեկան, 50

» » Վեցամսեայ 30

Շրջակայից » Տարեկան, 60

» » Վեցամսեայ 35

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՇԱՄԱՐ

Տարեկան Յրանգ 18

Վեցամսեայ » 10

ՌՈՒՍՒՈՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՇԱՄԱՐ

Տարեկան Բուրիի 7

Վեցամսեայ » 4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆՈՒԿ Է

ԵՒ ԲՂԹԱՍԱՐԻ ՇԱՄԱՐ

Թերթին Վարչութեանը վրայ է:

ՊԱՃՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Նոր Օր»-ի Վարչութեան հետեւեալ կարեւոր յայտարարութեան վրայ կը հրաւիրուի Պատ. բաժանորդներուն ուշադրութիւնը:

Ներկայ ՕՐՈՍՏՈՍԻ 117-էն ՍԿՍԵԱԼ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՃՏՈՆԱԿԱՆ ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ ՏԻԱՐ ՍՄԲԱՏ ՓԱՓԱՉԵԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ-ՕՐ»-Ի ԸՆԿԱՆԱԳԻՐՆԵՐՆ ԸՆՎԱՍԵՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԻՆ:

Այս առթիւ եզրապատի և Արտասահմանի արգոյ բաժանորդներէն կը խնդրուի որ հաճին վճարել իրենց բաժանորդագրիները, նկատելով որ ընկերութեան մը թերթը պահպանելու գըլխաւոր միջոցներէն մէկն է բաժանորդներուն կողմէն գաւաճ գործնական քաջաբերանքը:

ՀՐԱԻԵՐ

ՅՈՐԵՔՆԱՐՔԻ ՀԱՆԳԻՍՒ

Նոր Ի.ր.գ. գարուս հետ կը սկսի Գ. գար Մխիթարեան Ուխտիս, զոր երջանիկ Հայր մեր հաստատած է Աստուծոյ և Աստուածամոր նախախնամութեամբ՝ յ'8 Սեպտեմբերի 1701 տարուոյ: Փափագելով այս երկուհարիւրամեայ Յուրեանի յիշատակը՝ ըստ կարի մերում և ըստ տկարութեան՝ արժանաւորապէս կատարել, ի միջոցի լրման և յարման երկու անցեալ գարուց և Գ.ին, յ'8 Սեպտ. 1901, պարտք երախտագիտութեան համարիմք՝ ոչ միայն ծանուցանել մեր պատուական ազգայնոց, որոց բարոյական օգտին նուիրած են Հայր մեր Մխիթար և իր սրբիքն՝ իրենց նպատակը, ջանքն և աշխատանքը, այլ և համարձակիմք խնդրել իրենց բարեյօժար կարելի նիւթական նպատու, ի պէտս (ծախուց) պատրաստութեան հանդիսի և մնայուն Յիշատակաց Յորեւանին, որոյ համար այլ և այլ գրաւոր վայելչապարզ գործք առաջարկուած և սկսուած այլ են ի հրատարակութիւն, ի պատիւ նախահօրս մերոյ և ի վայելչ վիճքն և իր գործը յարգողաց, որոց ընծայարեութեան կամ արից համեմատ՝ կ'ընէ իրենց այլ մասն՝ այն հրատարակեալ Յիշատակներէն, և անկարողաց այլ նպատակելու՝ մնան ձրի բաշխելիք ինչ:

Եթէ լրութիւն Հայոց. յիրս ինչ տարբեր տեսութիւն ունեցեր է և սնի, սակայն, հարկ է խոստովանիլ, որ գրեթէ առհասարակ ազնուապէս միաբաներ է այս երկերիւրամեայ շրջանին մէջ՝ ի յարգութեան՝ առ Հայր մեր Մխիթար, ճանչնալով զնա մի ի գերագոյն բարերարաց,

երախտաւորաց և պարծանաց իւրոց, որոց համաձայն՝ օտարազգիք անգամ տեսողք իր կանգնած և կանոնած վանաց և վարժից, վկայեն գովութեամբ և զարմանօք:

Չեմք տարակուսիր որ այս նոր՝ երրորդ գարուս սկզբան և ընթացից մէջ՝ նորոգէ Հայրն Մխիթար իր եռանդն հոգին՝ Աստուածսիրութեան, ընկերսիրութեան և իմաստասիրութեան՝ յորդէս իւր, և ըլլայ անգողար բարեխօս վասն Ազգիս, ձայնակցելով իր և մեր նախնի երանաւէտ Ս. Հարց՝ լուսաւորչաց Հայոց:

Հ. ՂԵՒՈՆԻ Մ. ԱԼԻՇԱՆ

ՄԱՀԱԳՈՅԺ ԳՐԻԳՈՐԻ ԶԱՆԾԵԱՆ

Մեռա՞ւ Գրիգոր Զանչեան, մարդասէր հրատարակախօսը, որ իր բոլոր կեանքը — մտածում ու զգացում — նուիրած էր Հայաստանի հազարաւոր որբերը պաշտպանելու փնտմ գործին: Ողբացեալ Մեծ Հայք ծնած էր թիֆլիս 1851ին: Մտկուայի Լազարեան ճեմարանին ընթացաւարտ՝ մտած էր յետոյ նոյն քաղքի կայսերական Համալսարանը, ուր աւարտած էր իրաւագիտական մասնաճիւղը:

Զանչեան «Ռուսկիա Վեռոմոսդի» թերթին առաջնակարգ խմբագիրներէն մին էր ու գլխաւորապէս կ'ապրէր իր գրական վաստակներով. — ի հարկէ ռուսերէն. — իբրև գրագէտ ու հրատարակախօս, կարևորագոյն տեղ մը բռնած էր ինք ռուս գրականութեան մէջ:

Այսօր, բովանդակ Ռուսիան կ'ողբայ իր տաղանդաւոր ու առաքինի զաւկին, արի գրագէտին մահը. միլիոնաւոր թշուառներ, իրաւազուրկ ու անժառանգ, պանդուխտ ու բանտարկեալ, ամենքն ալ կուլան իրենց սե բաղքը, լքելով իրենց միակ պաշտպանին մահուան գոյժը, որ շանթի պէս ինկաւ անոնց գլխուն . . . :

Այո՛, ընդհանուր է սուգը, մարդկութեան ու ազգին սուգն է ան. աւելի՛ն, մեր տարաբաղք որբուկներուն հառաչանքը խառնուած է այդ սուգին արտայայտութեան հետ. որբուկներ, որոնք կրկին կ'որբանան ու իրենց հեծկլտանքն ու բողբոջները կը բարձրանան անողոր Մահուան դէմ, որ, ճիւղա՞ն անխիղճ ու անգութ, յաճախ կը սիրէ խամրեցնել վարդերը, իրենց անուշաւէտ բուրուաններուն մէջ, ու հիմայ, նոյն ճիւղին է որ կը խլէ կը տանի Հայութեան գրկէն իր սիրելագոյն զաւակը, զրկելով հազարաւոր մատղաշ ու անմեղ էակներ իրենց պաշտելի պաշտպանէն:

Երբ երկիւղած ու խոկուն, վայրահակենք գրկենիս դէպ ի փոքր ծաղրածու, որ լափեց ա՛յնչափ առոյգ ու ա՛յնչափ խոստմնարից կեանք մը. երբ պահ մը հօն կեցած՝ չափենք պարապը շուր կը թողու Զանչեան, իր տարածած մահուամբ. երբ, տխուր տխուր նախագագացումներով տանջուած, յուսահատի նայուածներ նետենք մեր բողբոջ, ի զուր ջանալ գտնելու անձ մը, գոնէ մէ՛կ անձ, որ իր վե՛հ գաղափարներով ու մաքուր զգացումներով արժանի ըլլայ գէթ մեղմելու — և թէ ոչ մտոցնելու — այս անգարմանն ի կորստին դառնութիւնը. ու երբ կը գրանենք հրատարակը թափուր՝ քաջարի ու անհնուէր գործիչներէ, լեցուն՝ թուրամբիներով, սինքրորներով ու շաղակրամներով, որոնք նախատինք միայն կը բերեն Հայութեան ու առաւ, ի՞նչպէս զսպենք մեր կարեւոր սրտի հառաչանքը. ի՞նչպէս չ'անիծենք այն կոյր ու քմահաճ բաղքը, որ իր գոհացումն ու յագեցումը՝ Հայութիւնը հարածելու, անոր ընտիր ընտիր ու հանճարեղ զուակները մէկիկ մէկիկ պակսեցնելու հաճոյքին մէջ կը գրտնէ լոկ:

Զանչեան՝ այս գարու վերջին կիսուն հայկական երկնքի մէջ փայլող յուսատու և լուսափիւռ աստղն էր, որ, աւա՛ղ, մարեցաւ ամսոյս 18ին, ու ա՛լ չը շողոր ու չը պիտի երևի յաւիտեա՞ն . . . :

Զանչեան՝ այն աննման բարերարն է, որ այս վերջին երեք տարուան կարծ միջոցին՝ աւելի քան 7500 ոսկի թափեց որբերու գանձանակը. գուրդուրանքով պահեց Հայաստանի մէջ 12 որբանոցներ, իր սեփական ծախքովը. վեհօգին, կորովին ու անընկճելին Զանչեան, որ արգէն ապահոված է անոնց գոյութիւնն երկու տարուան համար:

Հրէշային հակասութիւն մը. Անդին Զանչեան մը կը մեռնի, միլիոնաւոր տառապողներու ու հարստահարուածներու գատին ջատագով Զանչեան մը, ու ամբողջը, մոռացկո՞տ ապերախտ, քանի մը կաթիլ արցունք ալ կը զլանայ թերևս անոր գերեզմանին. իսկ ասդին, միլիոններու հոգիին, իրաւունքին ու պատիւին վրայ իր արիւնթաթախ գահը հաստատող, բիւրաւորներու տունը քանդող, անմեղներու գերեզմանը փորող, Հայաստանի Բորենին երեք հարիւր հազարներուն Գահիճը, հոգեվարքի մէջ հեծող կայսրութեան մ'անարգ ներկայացուցիչը, Արևելքի քրիստոնէութեան նախասահմանեալ պատուհասը, վերջապէս Չարին ու խաւարին մարմնացումը կ'ապրի ու կ'ապրի անպատիժ ու երջանիկ . . . : Անդին Տիպաք Մարգարի մը գամբանականը կը կարգացուի, ասդին Տիպար Մարգարտեացի մը բռնակալութեան արժաթի Յորեւանը կը պատրաստուի տօնել չբեղորէն:

Իսկ մեզի, Մայր-Հայրենիքին խորերը մտ-
ցուած ու երկրագնդիս շորս հովերուն յանձուած
ցիր ու ցան աստանգական Հայերոս կը մնայ
կատարելու մէջ պարտականութիւն, որ վեհմա-
գոյնն է պարտականութեանց. ա՛յն է անշնչելի
կերպով գործուած պահել մեր սրտերուն մէջ
սրբամաքուր ու քաղցրատխուր յիշատակը Մեծ
Հայուն, որբերուն ողբացեալ Հօրը, որ էր անըս-
պասելի մահուամբ խոր սուգի մէջ կը թաղէ
բովանդակ Հայրենիքը :

ՄԻՒԹԱՐԱՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Պրի՛, Փիւնի՛կ Հայութեան, Մեծ Մըրիթար,
Որու ճակտին՝ պատկառելի երկու գար՛
Անմահութեան կը բոյրեն լուսապակ,
Գեղ գոմիներ կը հրահն պէ՛տպէս հասակ

Թերը մ՛անառիկ ՚ի վեհեռիկ հիմնեցիր,
Հաւաքելու հօն նշխարներ ցան ու ցիր
Գու մեծ Ազգից թաղուած լեզուին, պատմութեան,
Անկապելի՛ գանձեր, պահել յաւիտեան

Թարձր ասճար լուսոյ, անշնչ վառարան,
Հաստատութիւնդ է հանճարի որորան,
Ծիրանեծուի ծովին ծոցէն ամբարձիկ՝
Ս. Ղազարու կղզեակն անբոյթ, գեղեցիկ:

Պետաբեր ազանիներ ասրմատարմ,
Հա՛ կը սլանան, բերանին չիւզ գովութարմ
Կը լեցնեն վուժուներով ողջ այեր,
« Օ՛ն արթնցէք », կը մնչին, ո՛վ խեղճ Հայեր:

Մառախապատ հայ երկնքէն
Սո՛յս սուր ինտի՛ր, Որ ու Բէն.
Ի մի, Հայեր՛, համարմարում՝
Պաղե՛նք հինը, նոր կերտուած,
Պրի՛ ու սե՛ս, Մեծ Մըրիթար,
Թոպէի մէջ երկու գար . . . :

ԱՆՊԱՅՏՈՆ ՀՐԱԻԵՐ ՄԸ

... Վարչութիւն «Նոր Օր» լրագրոյ
Դահլիճ

Սիրելի՛ Հայրենակիցներ,

Նուպիոյ անապատէն՝ ուր մարդ կը վար-
ժուի դառնութիւններ մոռանալ, աւելի քան
այլուր սիրել Հայրենիք, ազգութիւն և պար-
տականութեան գործադրութիւն, Չեզ կ'ուզըմ
սոյն սրտաբուխ հրաւերը :

A bon entendeur salut!

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱԿԱՔԱՇՈՅ

Մեր Պատ. ընթերցողները դարուս նորագոյն գիւ-
տերուն ծանօթացնելու և գիտութեան սէրը ժողովրդ-
ին մէջ տարածելու նպատակով նոր էջ մը կը բանանք
« Նոր Օրի » մէջ, հրատարակելով գիտական նորու-
թիւնները, գանազան թերթերէ ու հանդէսներէ քաղ-
ուած, որոնք կը յուսանք թէ՛ շահեկան ու օգտակար
պիտի ըլլան մանաւանդ մեր ժողովուրդին այն դաս-
կարգերուն համար, որ մտքի աղքատութենէն կը տա-
ռապին և չ'ունին զերութիւն վաշխելու գիտութեան
բարեփոխը, զրկուած ըլլալով օտար լեզուի մը հմտու-
թենէ :

Գիտական հաւաքածոյն այս անգամուան նիւթերը
կը բաղկանան հետեւեալներէն .

1. Ստատիստիկ մաթեմատիկ համար Գործիք մը . —
Ամերիկացի բժիշկ մը. Տօղդ. Էնֆիլտ, նոր գործիք
մը շինած է, որ կը ծառայէ լուսւոյ և մարտիկու ստա-
մբքը, որուն անկարգութիւններն ու բեռ աւարտութիւնը
կրնան ծանրակշիւ հետեւանքներ ունենայ և վտանգել
իսկ առողջութիւնը, հետեւաբար, այս գործիքը կոչուած
է խիստ կարեւոր օգուաններ ընծայելու բժշկական աշ-
խարհին: Ահա ասիկ թէ ինչպէս կը գործածուի այս
գործիքը :

Հայրենակիցնե՛ր,

Լսարան-Բնիկ բացատուն ընկերութեան Ընդհ.
Ժողովոյ գումարումը ապագային եղաւ անցեալ
անգամ՝ մեծ ամանութիւն գոյացած չ'ըլլալով :
Յաւաքի է որ, հրատարակու կամ այլապէս,
այն ընկերութեան շուրջն ի ձայն թմրելի և սրըն-
գի տարածայնութիւններ որոտացող և Ընդհ.
ժողով գոռացող անհատներէ ոմանք, հակառակ
Վարչութեան կողմանէ իրենց եղած մասնաւոր
հրաւերին, չ'հաճեցան ներկայ ըլլալ նոյն ժողո-
վոյ՝ որուն վերագումարումը, ինչպէս կը տես-
նուի տեղի պիտի ունենայ ի մտոյ :

Այս օրը վերջնականապէս մեզի պիտի բերէ
անձկանօք ակնկալուած տարածայնութիւններու
լուսարանութիւնը :

Անշուշտ ընկերութեան յարգելի անդամները
պիտի փութան՝ այս անգամ՝ միահամուռ ներ-
կայ ըլլալ հոն :

Հրաւեր մը սակայն մեր ազգայիններու ող-
ջամիտ և անկողմնակալ դասակարգին, որ գան
անձամբ բուն վիճարանութիւնները, սրմէ պիտի
ժողի լայնը :

Ի՞նչ պարտաւոր պատասխանատու Մար-
մինը. A bas Գործ. Ժողովը, եթէ իրենց սահ-
մանուած իրաւասութեանց չարաչար գործածու-
թեամբ վտանգած են ընկերութեան շահը, ա-
պագան :

Հակառակ պարագային՝ թող լռէ վայրա-
հալութիւնը, լիտի ու միշտ սանձարձակ :

Թող լռեն Basileի սրգեգիրներ, Մոյիէւի,
Պարոնանի հովեր առնող յաւակնոտ plumitif-
ներ. որոց գձուձ գործը եղած է, «նոր Օր»
պատկառելի ծրագրէն չիբացած, ջանալ շահա-
գործել միամիտներ, քանդել ու աւերել, պա-
ռակտել, խմբել ու ծաղրել՝ մինչև իսկ համաս
անձնու իրութիւնը, ու ինչ որ իրենց կուտակցա-
մոլ քմահաճոյից հաճելի դարձած չէ :

Ձեզմ կ'օչ մ'աննոց՝ որոնք յարգ պարտու-
նական համակրանք մը միայն քաջաբերել ու-
ղած են վարիչ մարմիններու սրտամաշ ճիղերը :
Պարզ համակրանք մը՝ ազգասիրական պարտոց
գիտակցութիւն ընդէ, սիրելի՛ Հայրենակիցներ :
Ո՛ւր էք դուք, համբրաշխաւէ՛ր պարոններ :
Գիտեմ՝ թէ դուք ալ՝ մեզի չափ՝ դառնա-
ցած էք մեր ընկերական բարքերու աղտոտու-
թիւններէն, վհատած՝ մեր գայթակղարի պա-
ռակտումներուն ի տես ու մեկուսացած, հան-
դարտ կեանքին մէջ կը փնտռէք ձեր ազգա-
սիրական օգտակարութիւնը :

Ի՞նչ գիւրդին բան՝ ո՛ւրէ պատրուակաւ քաշ-
ուիլ ասպարէզէն, ուր անտարակոյս, տարիներու

Նախ և առաջ հիւանդը կ'ենթարկուի քննութեան,
ստուգուելու համար անոր շնչափողին ու քթին մաք-
րութիւնը, եթէ հաստատուի այդ երկու գործարաննե-
րուն մէջ որ և է անկանոնութիւն կամ աղտոտութիւն,
փուռի կ'ենթարկուին, որպէս զի հիւանդին շնչառու-
թիւնը ճիշտ ու կանոնաւոր կատարուի : Այնուհետեւ,
հիւանդը կուլ կուտայ յետինէ խողովակ մը, որուն ծայ-
րը զետեղուած է մի փոքրիկ ելեկտրական լամպար, երբ
այս վերջինը լաւ մը կը հաստատուի ստամոքսին մէջ,
այն ատեն բժիշկը բաց կը թողու ելեկտրական հոսան-
քը, ու հիւանդին ներքին գործարաններն այնպէս մը կը
լուսաւորուին որ ստամոքսը, լիարդը, սիրտը տեսնելի
կը դառնան :

Այդ միջոցին կարելի է պարզ աչքով տեսնել ստա-
մոքսին հիւանդ մասերը, ուռցոցը, վէրքը, բշտիկ, ևն. :
Այս քննութիւնը կ'աւարտի առանց որեւէ զժուարու-
թեան, յետոյ բժիշկը հիւանդին կը խմցնէ շին մը թուրմ,
ամերիկեան Վարիա ծառի մոխրաշուր մը : Այնուհետեւ,
հաւանքը կուլ կուտայ յատկապէս պատրաստուած կա-
կուղ ու քնքուշ խողանակ մը, որ սովորական լամպար-
ներու մաքրութեան գործածուող խողանակին ձեւն
ունի : Խողանակը մետաղէ թելով մը միացած է զուրը
զրուած գործիքի մը հետ, որ պաշտօն ունի այդ խողա-
նակը պարտոցնելու ստամոքսին մէջ : Երբ խողանակը
հանդիպի ստամոքսին այն մասին որ մաքրուելու պէտք
ունի, բժիշկը կ'ակտի պարտոցնել գործիքը, որով կը պար-
տի նաեւ խողանակը, մաքրելով հիւանդ մասը, որ ար-
դէն նախապէս ներս ընդունուած մոխրաշուր կը լուսա-
ուի :

բարոյական թէ նիւթական անհուն զոհողութիւն-
ներու փոխան, անխիղճ նախատինք, ան-
տարբերութիւն և ապերախտութիւն պիտի
ըլլան մեր միակ վարձատրութիւնը՝ որբերու
օրհնէնքէն ի բաց : Սակայն եթէ ամեն իսկա-
պէս անկեղծ և անշահախնդիր Հայ այսպէս խոր-
հի, անձնազոհութիւն չ'ունենայ, ու այս աղ-
գաւեր ճամբան բռնէ, ա՛հ, ա՛վ պիտի ըլլայ
հասարակութեան առաջնորդը. կարգ մը խրատ-
ուիլակնե՛ր, տղան ընկնի մէջ բունաւորուած
կառնացող գորտեր . . . :

Վա՛յ այն ատեն . . . :

Ա՛լ կը բաւէ : Չգաստանանք Հայեր՛ր. լաւ
ճանչնանք, լաւ ընտրենք մեր առաջնորդները :
Մի քանի խօսուած Բեկզգբուզնե՛րու միմանց գէժ
անուցած յիսակալութեան սիրոյն շատ պառակ-
տուեցանք, աննոց կիրքերուն խաղալիք դար-
ձանք, անէ՛ժք աննոց, մինչդեռ Հայուն ներկայ
ողորայի կացութիւնը՝ համբրաշխութիւն, ընկե-
րական միութիւն կը պահանջէ մեզմէ և որբերը՝
հաց :

Հայրենակիցնե՛ր, ճշմարիտ ազգասէրնե՛ր :
Անպատի մէկ խորչէն, սիրտս սխուր փոր-
ձառութիւններէ դառնացած, յանուն ազգու-
թեան և ի սէր խաչեցեալ Հայրենիքին կը հրա-
ւերի՛մ ղՁեզ. եկէք միացէ՛ք մեզի, ու միա-
սիրտ և միահոգի՛ աշխատինք ազգին վերա-
կանգման սուրբ գործին :

Քաջաբերէ՛ք մեզ : Չերնութեաննպատ-
ններէն ուելի՛ անահման պէտքը կ'զգանք ձեր
բարոյական անխղճութեանը, սրմէ կախում ունի
Լսարան ընկերութեան յառաջդիմութիւնը, ըն-
թեղցատան վաղ ընդ փոյթ բացումը, «նոր Օր»
ապագան :

Ու այն ատեն այս ընկերութեանէն պէտք է
սպասենք Եզրիպտահայերոս մեծ յեղաշրջումը :
Կեցցէ՛ Լսարան-Բնիկ բացատուն :
Ս. Օ.

Վատի-Հալֆա, 18 Օգոստոս :

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԹԱՔՈՒ 18 Օգոստ. — Դաշնակիցներու Բէքին մըտ-
նելուն թուականին ու մանրամասնութեանց լուրերը
կը տարբերին իրարմէ. ճարտական ծովակալը կը տե-
ղեկազրէ թէ՛ Դաշնակիցները քաղաքին վրայ յարձա-
կեցան Օգոստ. 15 ին արեւելեան կողմէն, յամառ ընդ-
գիմութեան մը հանդիպեցան, և հաջիւ իրիկունը կրցան
մտնել քաղաքը, շուտ մը պաշարեցին զեսպանատուն-
ները : Ծարտնցիք ունեցան 100 իսկ Չինացիք 300 կո-
րուստ :

Ստամբուք, իրեն կալած աւելորդ կերակրեղէննե-
րէն ազատելով՝ կ'առողջանայ շուտով : Այս գործողու-
թիւնը վերջանալէ յետոյ, հիւանդը նորէն կուլ կուտայ
իրարու միացած երկու սեռինէ խողովակներ : Խող-
վակներէն մէկովը նորէն մոխրաշուր կ'ընդունի ստա-
մոքսը, իսկ միւսովը զուր կուտայ մոխրաշուրը :

Այս եղանակաւ քանի մը շին մոխրաշուր ներս լե-
ցնելէ ու պարպիլէ յետոյ, ստամոքսը կը լուսայ, կ'ու-
ղղէ, կը ցայէ մարուր թով ու, բժշկութիւնը կատար-
ուած է : Բնական է թէ՛ այդ բժշկութեան վրայ, մաս-
նաւոր հոգ պիտի տարուի այնուհետեւ ստամոքսին, զի-
ւրամարս ու անջլաս կերակուրներ և ուրիշ առողջա-
պահական կարգադրութիւններ սահմանելով հիւանդին :

2. Մեռած կարծուածներու յարուրիւն. — Դեռ
մինչև ցայսօր յայտնի չէ թէ՛ ջրի մէջ խեղդուածները,
կախուածները, կամ օդի պակասէն մոռածները՝ ո՛րչափ
ժամանակ վերջ կրնան բողբոլին մոռած համարուիլ,
որովհետեւ կրնայ պատահիլ որ այդպիսիք՝ կենդանու-
թեան ամեն նշան կորուսուած ըլլան, առանց սակայն ան-
կարելի ըլլալու աննոց կեանք տալը :

Վերջերս, Տօղդ. Լապօր. Բարիզի բժշկական Հա-
մալարանին ներկայած է այս խնդրի մասին մի գեղեցիկ
որուն մէջ առաջ բերուած են շատ մը հետաքրքրական
դէպքեր, որոնք ապացոյց են թէ՛ առհասարակ խեղդա-
մահները զեռ ընդունակ են երկար ատեն ապրելու, բա-
ւական է որ հարկաւոր խնամք տարուի : Ահա ասիկ
քանի մ'օրինակներ .

Միջերկրականի ծովեզրերը շինուած վերափրանգի

Ուրիշ գործերը ալ կան իբր թէ իշխան Շին խիստ մտերմական կերպով ընդունած է զաշխակիցները :

Օտարատեաց բոլոր բարձրաստիճան անձնաւորութիւնները թողած փախած են Պալատներուն մէջ պահուած զանձերը Հախան-Ֆու փոխադրուած են :

Թիէն-Չիւ 18 Օգոստ. — Դաշխակիցներուն յառաջ խաղաղքին առեւ, օրը բացառաբար գեղեցիկ էր. անձրեւները գրեթէ զարգած էին :

Անգլիացիք, ձարոնցիք, Ռուսերն ու Ամերիկացիները մինակ վերցուցին Բէրինի պաշարուածը : Միւս տէրութեանց զօրազուեցիքը, փոխադրութեան միջոցներու պակասէն, ետ մնացին :

Ռուսերը նորէն զարկին Չինեւր Շանկիայի մէջ : Թիւզանօթներն ու, զբօշակ առին : Չինեւրը կորուսին 400 մարդ :

Տէրութիւնները համաձայնեցան Չինական նաւատորմի վրայ հսկելու, արդէս զի փոխադրանաւորուն վրայ անոնց յարձակումներն արգելին :

Դաշխակիցները Բէրին մտան Օգոստ. 14 ի իրիկունը, ամբողջ ցերեկը ուժակոծելէ յետոյ. Ռուսերն ու ձարոնցիները թուրքի-Շու ջրանցքին հիւսիսային, իսկ Անգլիացիք ու Ամերիկացիք հարաւային եզերքին վրայ էին : Ինքզինքը պաշտպանուեցան յամառութեամբ : Իրիկունը զէմ, ձարոնցիք օրը հանեցին թաթարական Բաղաբին արեւելեան զոները, միեւնոյն առեւ Անգլիացիք ու Ամերիկացիք Թունկ-Բիէնի զոնէն չինական Բաղաբին վրայ կը խուժէին. ամենքն ալ զէպ ի զեպ անատուններն ուղղեցին իրենց գնացքը, ու զեպանները գտան ողջ առողջ :

ԲԱՐԻՉ 18 Օգոստ. — Մովակալները կը հաստատեն Բէրինի առումն ու զեպանատանց ազատուիլը :

ԼՈՐԷՆՉՈՒՄԱՐԻՉ 19 Օգոստ. — Պօլսական աղբերէրէ հեռագիր մը կ'իմացնէ թէ՛ զօրավար Տը Ուէզ գերբ բռնած է 4000 Անգլիացիներն ու թիւզանօթները :

ԲՐԷՍԵՆ 19 Օգոստ. — Չորավար Տը Ուէզ անձնազրուութեան տոբպած է Գոմանտոնէքը զբաւող Պասէն-Բաուէլը, որ պայմանները խնդրած է հասկնալ :

ՇԱՆԿԱՅ 19 Օգոստ. — Անգլիական զօրազուեցիքն երեկ սկսան ցամաք կենել, ու իբր ասոր հետեւանք, միասնադէպ ալ կը պատրաստուին 150 ծովային թիւզանօթակիր զօրք հանել ցամաք իրենց զազուութիւնըն մէջ :

ԼՈՆԴՐՈՒ 19 Օգոստ. — Մովակալ Պրուս կը հետադէ Շի-Ֆու է թէ՛ փողոցի կորուստը կը տեսնու զեռ Բէրինի մէջ, որուն մէկ մասը կրակի մէջ է :

Շանկ-Չու արգիւնց Կայսրուհին քաղաքէն մեկնելու : Չինեւրը գերմարդկային ընդդիմութիւն մը կ'ընեն ներքին քաղքին մէջ, զոր զաշխակիցները պաշարած են ու կը սմբակոծեն :

Ռուսք նոր պարտութիւններ կրել տուած են Չինեւրուն : Մանչուրիոյ հիւսիսակողմը : Մեծ թուով Քրուփի թիւզանօթներ առած են անոնցմէ :

Սիւ Դրօցները pavillons noirs կը շարունակեն ուղղուելու ստուար թուով զէպ ի Բէրին :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՕՐ ի վարչութիւնը, նկատելով որ ՆՈՐ ՕՐ ի եռամսեայ հաշուեկէտը կարելի է պատրաստել հազիւ հրատարակութեան եռամսէին աւարտման, առաջարկած է, յետաձգել տալ յառաջիկայ Ընդհ. Ժողովոյ տարեկան

գումարու մը, որպէս զի Ընկերութեան տարեկան համարատուութիւնը ներկայացուի անթերի :

Գործ. Ժողովու, նկատելով այս կարեւոր կէտը, ստիպուած է այս մասին խորհրդակցիլ Մայր-Դիւանի հետ, վերջնապէս որոշելու համար տարեկան Ընդհ. Ժողովոյ գումարման թուականը :

Կը փութանք յայտարարել զայս ի գիտութիւն Պատ. Ընկերաց Հայ Լսարան-Ընթերցաստան Ընկերութեան :

Ի դիմաց Գործ. Ժողովոյ
Վ. Ատենապարի Ատենապետ
Ե. ԳԱՐԱԳՈՇ Ս. ԲԻԻՐԱՏ

Լ Ր Ա Ք Ա Ղ

ՈՒՄՊԵՐԹՈՅԻ ՀՈՒԵՀԱՆԿԻՍՏԸ. — Ազգ. քանակի իտալական « Իլ Մետաճիլէրէ Էճի-ձիւնո » թերթին մէջ կը կարդանք.

Անցեալ կիրակի առաւօտ, ժամը 10ին Հայոց կեղեցիին մէջ ի յիշատակ Ումպերթո թագաւորին հոգեհանգստեան պատարագ մը մատուցուեցաւ :

Բազմաթիւ ներկայից մէջէն կը նշանակենք իտալական հիւպատոսը, Ապետ Ռոմանո. փոխ-հիւպատոսը Ասպ. Պուստէզէ. Հիւպատոսարանի մարմնը, Վաւե. Կառավարիչ բաշան ընկերակցութեամբ Պ. Պէնէտու չչիլի, իտալական ու հայկական զազթականութեանց երեւելի անձնաւորութիւններ :

Հայոց զազթականութեան երկու անդամները Տիարք Միւլթոնեան եւ Օհանեան կ'ընդունէին հանդիսականները Պանսա Սալոյա յի խումբը դամբանական մահերգը հնչեցուց կեղեցույ զբան առջեւ :

Պատարագին աւարտման փոխանորդ Հայրը խօսեցաւ պարագային յարմար դամբանական մը :

Բացարեւիչ յետոյ թէ՛ Ումպերթո թագաւորին եղբրական մարդ բոլոր քաղաքակիրթ աշխարհը սուգով համակած է, Բարոզիչը ամփոփեց ողբացեալ վեհապետին կեանքը հետեւեալ խօսքերուն մէջ. « Արի զօրահան, անկեղծ հայրենասէր, բարի եւ ողորմած թագաւոր » յետոյ, մէջ բերաւ ամբողջուած բարեկամական վազելի կապը Հայաստանի եւ իտալիոյ միջեւ, որոց վերջինը առած է առաջինին կարգ մը թագաւորներ Լուսինեան Ազգատունէն : Պատմեց համակրական զգացումները, զորս ցոյց տուած էին իտալական կառավարութիւնը եւ ժողովուրդը զէպ ի Հայերը : Ի վեր հանեց նաեւ այն պարագան որ վեհեղի մէջ, իտալական թագաւորութեան վահանին ներքեւ, կը գտնուի Հայոց մտաւորական ամենագնահատելի կեդրոնը որ է Միլթոնեան Միարանութիւնը : Ու այս ամենը հոգեհանգստին առթիւ տեղի ունեցաւ ի նշան իրենց երախտագիտութեան : Բարոզիչը վերջացուց ջերմագին բարեմաղթութիւններ ուղղելով վիզթօր էմանուէլ Գ. թագաւորին եւ իտալիոյ բարեբաւտութեան համար, եւ մաղթեց որ խաղաղութեան աստուածային հոգին իջնէ շատ մը զբաղուած հոգիներու մէջ :

Հոգեհանգստին պաշտօնը վերջացաւ ժամը 11ին Գահիրէի ՆՈՐ ՕՐ հայաթերթին տնօրէնը հեռագիր մը զրկած էր, յայտնելով թէ՛ Գահիրէի Հայ Գաղթա-

կանութիւնը կը միանար Ազգ. քանակի զազթականութեան հետ, Ումպերթո թագաւորի յիշատակին արժանավայել յարգանք մը մատուցուելու համար :

Ինչպէս որ նախորդ թուով գրուած էր, ՆՈՐ ՕՐ ի վարչութիւնը հեռագրաւ արտօնած էր իր անդամներէն Տիար Գառնիկ Չպուգճեանը, վարչութեան կողմէն ներկայ գտնուելու Հայոց եկեղեցիին մէջ կատարուած հոգեհանգստեան արարողութեան : Հետեւաբար կուգանք ուղղել մեր յարգելի իտալացի պաշտօնակցին վերոգրեալ հրատարակութեան վերջին հատուածը, յայտարարելով թէ՛ ՆՈՐ ՕՐ ի վարչութիւնը ընտել չէ մտաբերած Գահիրէի Հայ Գաղթականութեան ներկայացուցիչ հանդիսանալ, բայց, պարտք զգացած է իր համակրական զգացումները խառնել Ազգ. քանակի յայրենակիցներուն զգացմանց հետ, որոնք ա՛յնքան փայլուն կերպով կատարած են սոցալային պարտք մը, աւելի պնդելով իտալական ու հայկական համակրանաց կապերը :

Բ. ԴՐԱՆ ՀԻՆ ԽԱՂԸ. — Օգոստ. 15ի թուով Կ. Պոլսէն կը գրեն թէ՛ Բ. Դուրը, Պիթիւի հրամանատար Ալի բաշային տեղեկագրին կրթնած՝ կ'ուզէ պակսեցնել կարեւորութիւնը Սաուանի Սրազանք գիւղի վերջին զէպերուն : Դուրը կը պնդէ թէ՛ պարզ աւազակային զորք մ'է ան, մինչդեռ հիւպատոսներու նամակներէն առնուած վերջին լուրերը կը հաստատեն թէ՛ Ալի Բաշան իր զնդերով ու Բուրտուզի քերեց քանդեց Սրազանքը, թալիք ուրիշ երեք գիւղեր, 150է աւելի մարդ սպանելով : Դեպքանները, աւելի լրացուցիչ տեղեկութիւններ ստանալէ վերջ՝ պիտի ազդու բողոքներ ուղղեն Բ. Դրան : (? ? ?)

Մանրամասն տեղեկագրիներ կ'սպասուին, զլսաւորապէս վանի անգլիական Հիւպատոսինը, որ զէպին վարք գնացեր է անձամբ քննութիւն կատարելու համար :

Կիլիկիոց կաթողիկոսական տեղապահ Տ. Կիրակոս եպիսկոպոս Կիլիկիոյ շատ մը թիւերը անտիլու մնացած ըլլալը յայտնելով, Պատրիարքարանէն մէկ քանի եկեղեցականներ ուղած է, երեսի վրայ մնացած այդ վիճակներուն համար :

ՍՈՒԼԹԱՆԸ Պատրիարքարանի ծախքերուն աթիւ 500 լիւրա նուիրած է :

Հայոցմէ յափշտակուածներուն քանի՜ հազարերորդ մասն է . . . :

ՈՒՄՊԵՐԹՈՅԻ ՍՈՒԼԹԱՆԸ. — Հանգուցեալ Ումպերթո թագաւորը երբ իր հօրը յաջորդեց, 15 միլիոն Ֆրանքի անձնական պարտք մը գտաւ որ հօրմէն իրեն ժառանգ կը մնար. Ումպերթո իր հողերը ծախեց, արքունիքին ծախքերը վերին աստիճանի իջեցուց եւ շատ պարզութեամբ ապրելով յաջողեցաւ իր հօրը ձգած պարտքերը ամբողջովին հատուցանել :

Այսօր միայն մէկ քանի հազարահինգ ունէր որոնք ալ վարձքով բռնած էր եւ մաս մ'ալ դրամ մէկ կողմ դրած, այն ալ իր անձնական ծախքերէն խնայելով :

ՍՈՒԼԹԱՆԸ՝ ասկից քսան եւ հինգ տարի առաջ երբ իր եղբորը Սուլթան Մուրատի կը յաջորդէր իբր

մտաւակալքը, ծովեզերապահ Անիէլ 1778 ին ջրէն գուրս հանեց 16 տարեկան պատանի նաւագի մը զիակը, որ արդէն ծովին յատակը մնացած էր առնու ազն 10 վարկեան Դիակին վրայ բնաւ չ'էր երեւար կեանքի նշան մը, եւ ոչ՝ ալ յոյս կար զանի վերակենդանացնելու. մանաւազանք որ, հանրութեան մէջ մտարածուած կարծիք մ'է թէ՛ կը բաւէ միայն 3 րոպէ մնալ ջրի տակ, ամեն բան վերջնաժամու համար : Սակայն Անիէլ խղճալով պատանիին, կը փորձէ զանի կենդանացնել : Եւ որովհետեւ ինչն արդէն ծանօթ էր իշխանութեան կողմէն սրուած ամեն հրահանգներու, կսկսի գործադրել իրեն յայտնի միջոցները, որոնց մէջ ամենէն աւելի գործնականն ու նպատակայարարը նկատուած է խեղճուածի շեղուցն զուրս քաշել շարունակ եւ համաչափ շարժումով, ու բաց թողուլ որ զիւրանայ շնչատուութեան գործը : Կէս ժամ, ամբողջ մէկ ժամ, կը շարժարուի մարդը, բայց ի զուրի գիական ինկած է զժողովն ու անկենդան : Յուսահատիլ չ'գիտեր, կը շարունակէ իր գործը. մէկ ժամ ալ կ'անցնի, ու նորէն շ'տեսներ որ եւ՛ է նշան մը կենդանութեան : Սակայն յամառ պահպանք չ'տեսնել կանգ, մէկ ժամ ալ կը շարունակէ իր աշխատանքը, եւ անհամբեր լեզուէն կ'սկսի կարմրիլ, ինչ որ յայտնի նշան է կենդանութեան. րիչ վերջ, զիակը կ'սկսի շուռնջ քաշել. յետոյ, կը բանայ աչքերը, կը նայի, եւ ի վերջոյ, ոտքի կ'ելնէ ու իր շնորհակալութիւնը յայտնելով՝ առեն կը վերադառնայ :

Վերոյիցեալ զէպքէն կ'երեւի թէ՛ խեղճուածները պէտք չէ՛ որ մեռած համարուին, մինչեւ որ ասոնց վը-

րայ նեխման նշաններ չ'երեւան. այլ, պէտք է բոլոր յայտնի միջոցները գործածել զանոնք կեանքի բերելու համար : Եթէ խեղճուածը ջրի մէջ մէկ ժամ ալ աւելի մնացած ըլլայ, նորէն յոյս կտրելու չէ՛ :

Տօզը. Լապոր իր եզրակացութիւններն աւելի հաստատուելու համար փորձեր կ'ընէ շան վրայ :

Իր աշխատանոցին մէջ կը պահէր, պուլուօքի ցեղէն խոշոր, առողջ շուն մը, որուն քրորօքորմ կու տար այնքան որ շնչատուութիւնը կը դադրի եւ շունը ցոյց կուտայ մահուան բոլոր նշանները : Յետոյ, շանը լեզուն կ'սկսի համաչափ շարժումով ու անընդհատ գուրս քաշել, այնպէս որ քսորող ժամէ մը շունը կը վերակենդանանայ : Բժշկի սպասուողը ժամադրո՞ խիստ կը սիրէ եղբր այդ շունը :

Եւ անհ' միեւնոյն շունը նորէն կը խեղճեն հաստատապէս քրորօքորմով, վրան չ'են թողուր կեանքի նշոյլ մը ու կը յանձնեն ժամադրո՞ն՝ կեղտութիւն տալ իր սիրական շանը : Սպասուողը կ'սկսի իր տազակալի գործը, եւ կէս ժամ յոգնելէ վերջը՝ բժիշկներէն խորհուրդ կ'ստանայ թէ իր աշխատանքն արագրուին է, քանի որ շունը ստակած է վերջնապէս՝ բայց ժամադրոն չը գաղտնի դործելէ եւ ի վերջոյ սրտի անհուն բերկրանքով մը կը նկատէ որ իր սիրելին կենդանութեան նշաններ ցոյց կուտայ եւ աչքերը կը բանայ :

Այս փորձը զօրեղ կերպով կը հաստատէ թէ՛ խեղճուելէ քանի մը ժամ անցնելէ յետոյ ալ թոքը կրնայ գործելու ընդունակ ըլլալ :

Սակայն անպատեհութիւնն այն է որ զժուար բան է շարունակ ու կանոնադրապէս գուրս քաշել խեղճուածին լեզուն : Ասոր ալ ճարք գտած է Տօզը. Լապորի բարեկամներէն մէկը Մուշէլ, հնարելով գործիք մը, որ կը շարժի ժամացոյցի կազմ ունեցող մեքենայով ու 1 րոպէի մէջ կրնայ շարժիլ 120 անգամ. ի հարկին կարելի է այդ շարժումը զանդաղեցնել :

Յ. Կասաղուքեանի դեմ. — Մասնագէտներու հետազոտութիւնները կ'հաստատեն թէ՛ Եգիպտոսի մէջ, մինչեւ 1885 թուականը, պատահած չէ որ շուններ կատարութեան հիւանդութենէ բռնուէին, թէ եւ փողոցները թափառող շուններուն թիւ համար չը կար : Առաջինն անգամն ըլլալով, յիշեալ թուականին կը կատարի Անգլիացի մը շունը, որ ուրիշ շներ ալ խածնելով կատարութեան տարածումին պատճառ է դարձած :

Բայց անկարելի է որ հին Եգիպտոսի մէջ շները կատարութենէ բռնուած ու անոր դէմ միջոցներ ալ զըտնուած չ'ըլլան : Հին պապիրոսներու մէջ յիշատակութիւն կայ օճի խայթուածքէն ու կոկորդիլոսի կամ շան խածուածքէն առաջ եկած վտանգի մասին :

Հին աւանդութեան մէջ ըսուած է թէ՛ մարդուն մէկը մահուան դատապարտուած ըլլալով՝ օճի, կոկորդիլոսի ու շան մէջ կ'իջնայ. նախ կ'սպաննէ օճը, յետոյ կը ջախջախէ կոկորդիլոսի գլուխը, բայց զօհ կ'երթայ շան խածուածքին : Հաւանական է որ այդ շունը կատարած շուն մ'ըլլար :

(Շարունակելի)

անձնական սեփականությունը 30,000 օսմ. ոսկի միայն ունենալ, այն ալ իր հորեղբայրը Ապոստոլ-Ազիզ կայսրը նուիրած էր իրեն, իր անկուսկն քիչ առաջ՝ իմանալով եղբորորդուն Համբար չքաւորութիւնը որ աւանականէն ուրիշ բան մը չունէր:

Իսկ այսօր Աստիճան լոկ անձնական հարստութեան վրայ զազախար մը տալու համար կը բաւէ յիշատակել միայն Պարտատի նաճանգին մէջ ունեցած կալուածները, որոնցմէ ամսական 120,000 օսմ. ոսկի եկամուտ ունի: տարեկան 1,440,000 ոսկի: Ասոնցմէ զուրս են կայսրութեան ամեն կողմը ունեցած բազմաթիւ ընդարձակ սպարակները, մեծաթիւ շէնքերը եւ եւրոպական գրամատանց մէջ ունեցած տասնեակ միլիոնները:

ՄՈՍԿՈՒԱՅԻ ժամհարեան կղերքը 3000 բուրլի նուիրեր են Ռուսիոյ Եպիսկոպոս քաղաքին մէջ Պ. Իզմիրեանցի կողմէ նուիրուած գետնի մը վրայ եկեղեցիի մը շինութեան համար:

ՇԱՀԸ արուեստանոցէսի ոսկերչական մասնաճիւղին մէջ պարտած միջոցին ամենէն աւելի հաւնէր է Բարեկարգի հայազգի գոհարավաճառ Տ. Էգնայեանի ցուցադրած ապամանգներու հասարածոյին եւ երկարօրէն խոսեր է նարպարի վաճառականին հետ:

ԲԱՆԱՍԷՐ

ՀԱՆԳԻՍ

ՀՆԱԾՍԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԼԵՋՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԲՆՆԱԿԱՆ

Կը հրատարակուի երեք ամիսն անգամ մը, տարեկան չորս գիրք

Տնօրինութեամբ

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆԻ

Եւ աշխատակցութեամբ ազգային եւ օտար արեւելագիտաց

ԲԱՆԱՍԷՐ ի տարեկան գինն է 20 ֆրանք—8 բրլ. վեցամսեայն՝ 10 ֆր. — 4 բուրլի:

Մէկ գիրքը կ'արժէ 6 ֆրանք:

ԲԱՃԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆՆԻԿ Է:

ԲԱՆԱՍԷՐ քառ քիչ քանակութեամբ տպուելուն համար կը խնդրուի որ բաժանորդ գրուելու փափագ ունեցողները ժամ առաջ՝ յայտնեն իրենց հաճութիւնը:

Մեր հասցէն է՝

BASMADJIAN

112, Bd. Rochechouart PARIS

ԲԱՑՈՒԱՆ Է

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՊԱՏՈՒԹԻՒՆ

ԱՆՆԱՍԱՍՏՈՒԹԻՒՆ

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆԻ

Գործու է Հաւաքումն պատմեաց Հայոց՝ ժամանակագրական կարգաւ, սկիզբէն մինչև ժէգար: Հաւաքին աշխարհարար լեզուաւ կը յաւելու բացատրութիւններ եւ ծանօթութիւններ իւրաքանչիւր իջին ներքի:

ՀԱՆՊԱՄԱՆՔ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ. քառամսայ մեծագիր, շքեղ թղթոյ վրայ, եւ պատկերազարդ:

Բաժանորդաց ինն է 30 ֆրանք կանխիկ ճանապարհի ծախքը մեր վրայ: Յետ ա. տրաման պիտի վաճառուի 30 ֆրանքի:

Բաժանորդագրութեան ժամանակ զեղջ չի լինիր. բայց 10 օրինակ բաժանորդ գտնողին օրինակ մի կա կը տրուի ձրի:

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

ՄԻԹԱՐԵԱՆ ՏՊԱԳՐԱՏԱՆ

«ԼՈՒՍԻՆԵԱՆՔ»

ԳՐԵՑ

ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԻԹ ԲԷԿ

460 էջ, տպարան Վիէնայի Մլիթարեանց 1900. գինն է 2 ֆր.

Կը ծախուի հետեւալ պայմաններով՝

Չորս հարիւր օրինակ Արարկիրի Որբանոցին համար. երեք հարիւր օրինակ Կիպրոսի Որբանոցին համար. իսկ մնացած 300 օրինակը հեղինակին համար:

Հեղինակը այդ 300 օրինակները կը պահէ իւր ծախքին հանելու եւ բարեկամներու նուիրելու. համար. իսկ միւս օրինակները բոլորովին անձնական իրեն են եւ հեղինակը նուիրած է հայ յիշեալ երկու որբանոցներուն:

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ

Ի նպատակ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ «Բազմավէպ» բացատրի պրակ մը կը հրատարակէ: Թերթին երկայնութիւնն է 42 հարիւրորդամէթր. լայնը՝ 30 հրդմ.: Թերթը կը բաղկանայ 40 էջերէ, եւ ամէն էջ կը լայն սիւնակներու բաժնուած է: Թուրքի հաստ, ողորկ, փայլուն ու շատ ընտիր: Կը պարունակէ ժողովրդեան ուշաքրաւ հետաքրքրական եւ ոգտակար յօդուածներ: «Բազմավէպ»ի այս բացատրիկ լայնածաւալ մեծ թերթը կը հրատարակուի իրրու անդրանիկ «Հայ պատկերագրութիւն» մը Illustration Arménienne, նման եւրոպական մեծ ազգաց շարժական պատկերագրութիւններուն:

Կը տպուի մի քանի հազար եւ ստակը պիտի յատկացուի հայ որբանոցներու:

Գինն է ԿԱՆՆԻԿ 2,50 ֆր. կամ 1 բր. 50 սէնթ:

Այս ծանուցագրով կը հրաւիրենք մերազնեայ այն մասն ազնիւ ու գթած անձնաւորութիւնները որ բաժանորդագրուելով այս բացատրիկ պրակին, համետ լուծայ մը բարեհաճին ձգելու հայ որբիկներու դանձանակին մէջ:

Բաժանորդագրաց անունն, եւ ով որ այս նպատակաւ որբիկներուն օգնութեան պիտի հասնի, հաւաքուած գումարը եւ որչափ պիտի յատկացուի իւրաքանչիւր որբանոցներու, պիտի տպուին «Բազմավէպ»ի պրակներուն մէջ:

Այս բացատրիկ թերթին մէջ կը տպուին նաեւ ծանուցումներ, մէկ տողի գինն է 25 սանթիմ, փափագողք փութեան զիւր իրենց ծանուցումները:

Մեր հասցէն է՝

Rédaction de la Revue «PAZMAVEB»
(St. Lazar) VENISE (ITALIE)

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ՏԻԳՐԱՆ Հ. Թ. ՍԱԻԱԼԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱՆ ՅՈՒՇԵՐ

Ս. Գարբիւնեան տպարանէն մաքուր տպագրութեամբ եւ հեղինակին վիճակը պատկերով զարգարուած ի լոյս ելնելու մօտ է հարիւրէ աւելի էջերէ բաղկացեալ սոյն կենսագրական երկն որ իւր շահեկան պարունակութեամբ արժանի է ամեն կարգի ազգայնաց ընթերցման: Ինքնակենսագիր, Չմիւսնիոյ հին ծանօթ գրական գէմբերէն մին, իր Երուսաղէմ, Աղեքսանդրիա, Իզմիր եւ Էստեմիլ վարած ուսուցչական եւ այլ կարեւոր պաշտօններու բերմամբ՝ ազգային եւ օտարազգի եկեղեցական եւ աշխարհական նշանաւոր անձնաւորութեանց հետ ունեցած է գրաւոր եւ մտերմական յարաբերութիւններ, զորս զիտցած է ճարտար կղանակաւ մը խառնել իր կենսագրական յուշերուն, այնպէս որ ամբողջ գործն մէկ շունչով կարելի է կարգալ անձնաճարտի եւ լարուած հետաքրքրութեամբ:

Որովհետեւ սակաւաթիւ օրինակներ միայն տպուած են սոյն կենսագրական երկն, փափագողք կրնան այժմէն ընկ իրենց յանձնարարութիւնն՝ զիմելով

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ ՏՊԱՐԱՆԸ

Ի Պազար Մուրուր Թիւ 27

Գին 5 ԴԱՀ. ՈՂԶ

Le gérant, J. MUNIER.

ԿՈՒԶԷՔ ՈՒՆԵՆԱԼ ՈՍԿՈՒ

ԿՈՒԶԷՆ ԼԱՐԻՈՂ, ԽԻՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ

ԺՍՄԱՑՈՅՑ ՄԸ

ՄԻՄԻԱՅՆ 120 ԴՐՇ. ՎՃԱՐԵԼՈՎ

ԴԻՄԵՑԷՔ

ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԳԱՀԻՐԷ ՄՈՒՍԻՔ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաեւ ՈՍԿՈՒ ամեն տեսակ ժամացոյցներու ամենազերամատչելի գններն սկսելով մինչեւ ազամանդաղարգ: Արժաթ ժամացոյցներ 50 զրուշէն սկսեալ Նիքէլ որմծնթուած ժամացոյցներ 22 զրուշէն սկսեալ. նաեւ Ոսկի, արծաթ եւ ոսկեպատ ջրթաներ եւ գոհարեղէններ, ինչպէս նաեւ պատի եւ քօնսօյի բազմազան բանտիւններ:

Ամերիկեան Նիքէլ ժամացոյցներ, գրասեղանի յատուկ, 10 Ղրուշի անհատապի գնոյ փոխարէն, որոնք լաւ կ'ընեն:

Ուրեմն զիմեցէ՛ք ուղղակի:

ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՊԵԼԱԵԱՆ-ԺԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԻՐԶԱԿՆԵՐ

Տիկնաց եւ արաց

ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապսիքի մեծ պողոտային վրայ, Տալիայի Մանիլի դիմացը, նախկին ելեկտրական գործիներու վաճառատունը:

Վերջերս Ամերիկայէն հաս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք զուհայնել մեզ զիմեղ Պատ. յաճախորդները, գործի մաքրութեան, գիններու չափաւորութեան եւ ճշգրտագործական կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաեւ ձեւագիտութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար գիմել մեր գործատեղին:

ԱՏԱՄԱՐՈՅԺ Պ. ՆԻԿՈՂԻՍՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, Թիւ 9 դասիկոնը: Կը բժշկէ բերնի եւ ակուսի ամեն տեսակ հիւանդութիւնները: Ազգասերը ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ՉՈՒԻՉ-ՄԵՔԵՆԱԳՐՈՒՄ

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐՔ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ ՆԱԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ

Շարա Մուհամմէտ Ալի, Հապպանիլի

Կը ձուլեն, կը շինեն երկաթէ ու արոյրէ զանազան գործիներ ոսկերչութեան եւ ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծորակ, Էլնի Յաճախորդները գոհացուող պայմաններով:

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 19 ՕԴՈՍՏՈՍ 1900

7422	891	8434	9825	792	256
423	83	742	360	588	2914
3201	3185	3337	3357	3877	4075
4841	6094	6155	6765	7195	7531
		7301	7894	8644	

Տպագրուիւն Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ — Պազար Մուրուր